ՀՏԴ : 947.925

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ՍՊԻՏԱԿ ԷՋԵՐԻՆ»*

Վերջին տարիներին ակնհայտորեն մեծացել է հումանիտար հետազոտողների և լայն հանրության հետաքրքրությունը Հայաստանի պատմության խորհրդային ժամանակաշրջանի նկատմամբ: Դրա վկայություններն են հրատարակված բազմաբնույթ ուսումնասիրությունները, որոնք նոր լույս են սփռում այդ ժամանակահատվածի պատմության բազում կնճռոտ խնդիրների վրա: Հայոց պատմության խորհրդային ժամանակաշրջանն առանձնահատուկ է ոչ միայն սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով, այլ՝ քաղաքական ամբողջատիրական համակարգի ներդրմամբ, որի արդյունքում հաստատվեց կոմկուսի մենատիրությունը: Այս փոփոխություններն իրենց ուղղակի ազդեցություններն էին թողնում մարդկանց կյանքում՝ ձևավորելով հասարակական առանձնահատուկ հարաբերություններ, մարդկանց թելադրելով յուրօրինակ մտածելակերպ ու կենսակերպ:

Խորհրդային Հայաստանի հատկապես հետպատերազմյան շրջանի որոշ հիմնախնդիրներ դուրս են մնացել պատմաբանների ուշադրությունից, ինչի արդյունքում մնացել են բազմաթիվ «սպիտակ էջեր» և «մութ անցքեր», որոնց բացահայտումը, արժևորումն ու անաչառ գիտական գնահատականը հայ պատմագիտության կարևորագույն, արդիական խնդիրներից է: Ասվածն առավել քան վերաբերվում է խորհրդային պետության գոյության վերջին քառորդին (1965–1991 թթ.), որը խորհրդային Հայաստանի պատմության առավել քիչ ուսումնասիրված փուլերից է: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ տարիներ շարունակ հետազոտություններ են իրականացվում, հոդվածներ, գրքեր հրատարակվում և գիտաժողովներ կազմակերպվում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում (ՊԻ):

ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ Պատմության ինստիտուտում իրականացվող «Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջերը». ազգային զարթոնքից մինչև անկախություն (1965–1991 թթ.)» գիտական թեմայի (ղեկավար՝ Կարեն Խաչատրյան, անդամներ՝ Համո Սուքիասյան, Գագիկ Ժամհարյան, Գայանե Ղազարյան) շրջանակներում 2023 թ. ապրիլի 30-ին Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում անցկացվեց «Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը»» խորագրով միջազգային գիտաժողով և կլոր սեղան-քննարկում:

Գիտաժողովի առաջին նիստում (նիստավար՝ Կ. Խաչատրյան) լսվեց 4 զեկուցում: Պ. գ. դ., պրոֆ. Կարեն Խաչատրյանը (ՊԻ) «Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության ուսումնասիրումը արդի պատմագիտության մեջ» զեկուցման մեջ կարևորեց առօրեականության պատմության ուսումնասիրումը որպես պատմագիտական ուսումնասիրությունների նոր

* *Ներկայացվել է 12. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

ուղղություն: Նա համառոտ գծերով ներկայացրեց 2009 թ. սկսած Հայաստանում առօրեականության պատմության ուսումնասիրման ընթացքը՝ շեշտադրելով այն կարևորագույն ձեռքբերումները, որոնք արձանագրվել են անկախ Հայաստանում պատմագիտական հետազոտությունների արդյունքում: Պ. գ. թ. Վիկտոր Իշչենկոն *(ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտ)* «Повседневная забава или политический инструмент? Как большевики конструировали спортивную жизнь в СССР» *զեկուցման մեջ անդրադարձավ ԽՍՀՄ սպորտային կյանքին՝ ցույց տալով, թե ինչպես էին խորհրդային իշխանությունները կարևորում սպորտն ու այն դարձնում կարևորագույն քաղաքական գործիք: Զուգահեռներ անցկացնելով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների միջև՝ նա ընդգծեց, որ խորհրդային մամուլը ծավալուն տեղեկատվություն է պարունակում բնակչության սպորտային առօրյայի վերաբերյալ: Պ. գ. թ.* Գագիկ Ժամհարյանը *(ՊԻ) «Խորհրդային առօրեականության պատմության ուսումնասիրության տեսական հարցերը» զեկուցման մեջ անդրադարձավ առօրեականության պատմության՝ որպես պատմագիտական հետազոտությունների ինքնուրույն ոլորտի ձևավորման պատմությանը, պատմագիտական հետազոտություններում առօրեականության պատմության մեթոդաբանության կիրառության հեռանկարներին: «Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջերի» բացահայտումը արխիվային փաստաթղթերով» զեկուցման մեջ պ. գ. դ.* Ամատունի Վիրաբյանն *(Հայկական պետական մանկավարժական համալսարան) ընդգծեց արխիվային փաստաթղթերի կարևորությունը՝ որպես Խորհրդային Հայաստանի պատմության չուսումնասիրված խնդիրների՝ «սպիտակ էջերի» բացահայտման սկզբնաղբյուր: Պ. գ. դ., պրոֆ.* Արմենակ Մանուկյանը *(Երևանի պետական համալսարան) «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 1960–1980-ական թվականներին (պատմության «սպիտակ էջերը»)» զեկուցման մեջ անդրադարձավ Խորհրդային Հայաստանի ազգաբնակչության շրջանում այլակարծության դրսևորումներին, կարևորեց այլախոհության ուսումնասիրումը՝ իբրև Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջ»: Նա զուգահեռներ անցկացրեց միութենական այլ հանրապետությունների այլախոհական շարժումների հետ՝ ցույց տալով ընդհանուր օրինաչափություններն ու տարբերությունները:*

Երկրորդ նիստում (նիստավար՝ Հ. Սուքիասյան) լսվեց 5 զեկուցում: Պ. գ. թ. Ավագ Հարությունյանը *(Հայաստանի ազգային արխիվ) «Խորհրդային Հայաստանում ազգային զարթոնքի արտացոլումը կինոֆոտո նյութերում» զեկուցման ընթացքում ընդգծեց Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում պահվող նյութերի կարևորությունը Խորհրդային Հայաստանում ազգային զարթոնքի ժամանակահատվածն ուսումնասիրելու գործում: Նա շեշտեց, որ կինո, ֆոտո և ֆոնո փաստաթղթերն առավել ամբողջական ու զգացական են պատկերում բնակչության առօրյա կյանքը՝ նիստուկացը, կենցաղը, աշխատանքը, տոները և այլն: Այս առումով զեկուցողը կարևորեց «Սովետական Հայաստան» կինոխրոնիկան՝ իբրև բնակչության առօրյա կյանքի ուսումնասիրության աղբյուր: Պ. գ. թ., դոց.* Հովհաննես Ալեքսանյանը *(ՊԻ) «Դրվագներ հայրենադարձների խորհրդահայ առօրյայից» զեկուցման մեջ անդրա-*

դարձավ 1946–1948 թթ. Մեծ հայրենադարձության շրջանում ներգաղթի կառույցների կազմակերպմանն ու գործունեության հարցերին, հայրենադարձների դրությանը, հայրենիքում ունեցած խնդիրներին: Նա կարևորեց հայրենադարձների կենցաղի ու գործունեության ուսումնասիրությունը՝ որպես Խորհրդային Հայաստանի նոր իրականություն ձևավորողների: Պ. գ. թ., դոցենտ Լիլիթ Զաքարյանը *(ՊԻ) «Ինքնահրատը վերակառուցման տարիների Հայաստանում» զեկուցման մեջ անդրադարձ կատարեց գորբաչովյան ժամանակափուլում Խորհրդային Հայաստանում տպագրվող ինքնահրատ թերթերին՝ որպես այլախոհության դրսևորում: Նա զուգահեռներ անցկացրեց ինչպես նախընթաց շրջանի (1960–80-ականների սկիզբ), այնպես էլ հաջորդ ժամանակափուլի (1990-ականների սկիզբ) միջև՝ ցույց տալով «Վերակառուցման» շրջանի ինքնահրատ պարբերականների առջև ծառացած խնդիրները: Պ. գ. թ., դոցենտ* Համո Սուքիասյանը *(ՊԻ) «Պաշտոնական դիրքի չարաշահումները Խորհրդային Հայաստանում 1960–1980-ական թվականներին» զեկուցման մեջ անդրադարձ կատարեց նշյալ ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանում տարածված պաշտոնական դիրքի չարաշահումների դրսևորումներին, որը թեև բնորոշվում էր իբրև պետական-կուսակցական մակարդակում բույն դրած չարիք, այդուհանդերձ, այդ բացասական երևույթի դեմ պայքարը դրական արդյունք չէր ունենում: Այն համակել էր պետական և հանրային կյանքի բոլոր բնագավառները: Հայցորդ* Գայանե Ղազարյանը *(ՊԻ) «Խորհրդային տոները Հայկական ԽՍՀ բնակչության առօրյա կյանքում» զեկուցման մեջ ներկայացրեց խորհրդային տոները՝ որպես Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության բաղկացուցիչ մաս, անդրադարձավ սովորական քաղաքացիների առօրյայում պետական տոների ունեցած նշանակությանը, կարևորեց տոնի առօրյայի ուսումնասիրությունը:*

Գիտաժողովի վերջում ցուցադրվեց 1960-ականների խորհրդահայ առօրյան պատկերող երկու վավերագրական տեսանյութ նվիրված Սարդարապատի հուշահամալիրի բացմանը (1968 թ.) և Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի ոգեկոչմանը (1965 թ.):

Գիտաժողովի արդյունքների ամփոփումից հետո Կ. Խաչատրյանի ղեկավարությամբ անցկացվեց կլոր սեղան–քննարկում՝ «Առօրեականության պատմության ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» թեմայով: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բ. գ. դ. Անուշավան Զաքարյանը, *ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ. գ. թ., դոցենտ* Հակոբ Մուրադյանը, *երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ* Վահե Սարգսյանը, Ա. Վիրաբյանը, Ա. Մանուկյանը, Ա. Հարությունյանը, Լ. Զաքարյանը, Գ. Ժամհարյանը, Հ. Սուքիասյանը: *Նրանք կարևորեցին ՀՀ-ում առօրեականության պատմության ուսումնասիրության հեռանկարները, պատմության անհայտ էջերի բացահայտումը, նոր մեթոդների յուրացումն ու կիրառումը, ինչը կարող է թարմություն բերել պատմագիտական հետազոտություններում, նպաստել գիտական արդյունքների դյուրին հանրայնացմանը:*

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ